

Ձկնորսական սեզոն

հեղինակ՝ Ռոբերտ Շերլի

թարգմանիչ՝ Ռուբեն Ավետիսյան

Մալրններն այն նորակառույց թաղամասում ընդամենը մի շաբաթ էին ապրել, եւ սա նրանց առաջին հրավերն էր:

Ուղիղ ուրն անց երեսուն տեղ հասան: Քարմայքներն ակներեւաբար պատրրաստվել էին նրանց գալստյանը, քանզի առմուտքի լույսը վառ էր, դուռը մասամբ բաց, իսկ հյուրասենյակը՝ լուսավոր ու պայծառ:

— Միրոնն էմ,— դռան մոտ հարցրեց Ֆիլիսը. — Հագուստս լա՞վ է նստում, մազերս գանգո՞ւր են:

— Դու կարմիր գլխարկով երազ ես,— հավատացրեց նրան ամուսինը:— Միայն թե տպավորությունը չփչացնես՝ խաղը մեկանոցներից սկսելով:

Ֆիլիսն ի պատսախան, ուրախ ծամածռություն արեծ եւ սեղմեց դռան գանգը: Ներսում փափուկ դողանջներ հնչեցին:

Մալրնն ուղղեց փողկապը: Գրպանի թաշկինակը աննշան տեղաշարժեց: Ոչ ոք դռանը չմոտեցավ:

— Երեւի մառանում կոկտեյլ են պատրաստում,— ասաց Մալրնը կնոջը: Նորից գանգե՞մ:

— Ոչ, մի բոպե սպասիր:— Սպասեցին, ապա Մալրնը նորից սեղմեց գանգը: Կրկին դողանջներ հնչեցին:

— Շատ տարօրինակ է,— մի քանի բոպեից ասաց Ֆիլիսը:— Այսօր էինք հրավիրված, չէ՞:— Ամուսինը գլխով արեց: Տաք գարնանային երեկո էր: Քարմայքները պատուհանները բաց էին թողել: Վարագույրների արանքից երեւում էին բրիջի պատրաստ սեղանը, դասավորված աթոռները, քաղցրավենիքի սկահակները՝ ամեն ինչ տեղը տեղին: Սակայն ոչ ոք դռանը չէր մոտենում:

— Գուցե տե՞ղ են գնացել,— հարցրեց Ֆիլիս Մալընը: Նրա ամուսինը մարգասեղի ուղղությամբ արագ քայլեց դեպի ցանկապատը:

— Մեքենան այստեղ է:— Նա վերադարձավ, հրեց ու ավելի լայն բացեց մուտքի դուռը:

— Ջի՛մի, ներս մի գնա:

— Չեմ գնում:— Նա գլուխը դրան արանքով ներս մտցրեց:— Ողջո՛ւյն, տանը մարդ կա՞:

Լռություն:

— Ողջո՛ւյն,— գոռաց Մալընը եւ ուշադիր ականջ դրեց:

Կողքի տնից աշխույժ ձայներ էին լսվում՝ մարդիկ գրուցում էին, ծիծաղում: Փողոցով մի մեքենա անցավ: Նա լարեց լսողությունը: Ինչոր ճռռոց լսվեց, ապա կրկին լռություն տիրեց:

— Հո չէի՞ն կարող գնալ ու տան դուռն այսպես բաց թողնել,— ասաց նա Ֆիլիսին:— Մի բան պատահած չլինի՞:— Մալընը ներս քայլեց: Ֆիլիսը հետեւեց նրան, բայց մնաց անջճռական կանգնած հյուրասենյակում, մինչդեռ ամուսինը դիմեց դեպի խոհանոց: Լսվեց, թե ինչպես նա բացեց մառանի դուռը եւ գոչեց. — Տանն ո՞վ կա:— Հետ նորից փակեց: Ապա վերադարձավ հյուրասենյակ, հոնքերը կիտեց եւ աստիճաններով բարձրացավ:

Մի քիչ անց իջավ՝ դեմքին տարակուսանք:

— Այնտեղ ոչ ոք չկա,— ասաց նա:

— Գնանք այստեղից,— ասաց Ֆիլիսը, հանկարծ նյարդայնանալով այդ պայծառ, դատարկ տանը:

Մտածեցին, թե գուցե գրություն թողնեն, հետո որոշեցին, որ չարժե եւ տնից դուրս եկան:

— Դուռը չփակեի՞նք,— հարցրեց Ջիմ Մալընը, կանգ առնելով:

— Ի՞նչ օգուտ: Բոլոր լուսամուտները բաց են:

— Այնուամենայնիվ:

Նա ետ դարձավ եւ փակեց դուռը:

Ամուսինները դանդաղ քայլում էին, մերթընդմերթ ետ նայելով: Մալընը համարյա սպասում էր, որ Քարմայքլներն ուր որ է վազելով կհասնեն իրենց ետեւից ու կգոչեն՝ խաբեցի՛նք:

Սակայն տունը մնաց լուռ:

Նրանց բնակարանը հեռու չէր: Դա մի աղյուսե տնակ էր, ճիշտ այնպիսին, ինչպիսին այդ թաղամասի մնացած երկու հարյուր տնակները: Ներսում միստր Քարթերը թղթախաղի սեղանի վրա ձկնորսության համար արհեստական ճանճեր էր պատրաստում: Նրա անշտապ ու վստահ գործող հմուտ մատները մեծ խնամքով էին հյուսում գույնզգույն թելերը: Այնքան էր կլանված աշխատանքով, որ չլսեց Մալընների ներս գալը:

— Հայրիկ, մենք տանն ենք,— ասաց Ֆիլիսը:

— Ա՛,— մրմնջաց միստր Քարթերը,— համա նայեք, ինչ սքանչելի բան է:— Նա ձեռքն առավ մի պատրաստ ճանճ: Դա ձիաբռոյի համարյա ճշգրիտ կրկնօրինակ էր: Կեռիկը խորամանկորեն թաքցրած էր դեղին ու սեւ թելերի արանքում:

— Քարմայքլները տեղ էին գնացել... ըստ երեւոյթին,— ասաց Մալընը, պիջակը կախելով:

— Այս առավոտ Հին ծովախորշն եմ փորձելու,— ասաց միստր Քարթերը:— Ինչոր բան ինձ ասում է, որ այն ժիր կարմրախայտը կարող է այնտեղ լինել:

Մալընն ինքն իրեն ժպտաց: Ֆիլիսի հոր հետ խոսելը դժվար էր: Վերջերս նրան ձկնորսությունից բացի ոչինչ չէր հետաքրքրում: Ծերուկը յոթանասունամյակի օրը թողել էր իր շատ հաջողակ բիզնեսը, որպեսզի ամբողջովին նվիրվի սիրած զբաղմունքին:

Այժմ, թեև ութսունը լրանալու վրա էր, միստր Քարթերը հիանալի տեսք ուներ: Ապշեցուցիչ բան, մտածեց Մալընը: Մաշկը վարդագույն էր, աչքերը՝ վճիտ ու անվրդով, անբիծ սպիտակ մազերը խնամքով ետ էին սանրած: Գիտակցությունը լրիվ տեղն էր... քանի դեռ խոսքը գնում էր ձկնորսությունից:

— Եկեք մի բան ուտենք,— ասաց Ֆիլիսը: Նա ափսոսանքով հանեց կարմիր գլխարկը, հարթեցրեց շղարշը եւ դրեց սուրճի սեղանին: Միստր Քարթերը ճանճին մի թել եւս ավելացրեց, մոտիկից գննեց, հետո վար դրեց եւ աղջկա ու փեսայի ետեւից գնաց խոհանոց:

Մինչ Ֆիլիսը սուրճ կպատրաստեր, Մալընը ծերուկին պատմեց, թե ինչ էր եղել: Միստր Քարթերի պատասխանը կարելի էր նախօրոք գուշակել:

— Մի քիչ ձկնորսությամբ զբաղվիր վաղը եւ աշխատիր մոռանալ:
Ձկնորսությունը, Ջիմ, պարզապէս ժամանակ անցկացնելու ձեռն չէ: Ձկնորսությունն
ապրելիք է, նաեւ փիլիսոփայություն: Միրում եմ մի խաղաղ գետնախորշ գտնել եւ
նստել ափին: Ես մտածում եմ՝ եթէ ինչոր տեղ ձուկ կա, ապա նույն հաջողությամբ
այստեղ էլ կարող է լինել:

Ֆիլիսը ժպտաց, տեսնելով, որ Ջիմը բազկաթռոյի մեջ անհանգիստ
այտուայնկողմ էր շարժվում: Նա գիտեր, որ եթէ իր հայրը սկսեց, նրան կանգնեցնելն
անհնար է: Իսկ սկսելու համար ծերուկին չինչին առիթ էլ բավական էր:

— Պատկերացրու,— շարունակեց միստր Քարթերը,— մի երիտասարդ
ծառայող՝ ասենք, քեզ նման մեկը, Ջիմ, պլանում է միջանցքով: Հիմա կասես՝ հետո՞
ինչ: Բայց այդ երկար միջանցքի ամենածայրում գետակ է հոսում լի
կարմրախայտերով: Կամ պատկերացրու, քաղաքական գործիչ: Դու իհարկէ
Ալբանիում դրանցից շատ էիր տեսնում: Ձեռքերին պորտֆել, հուզված...

— Տարօրինակ է,— ասաց Ֆիլիսը, ամենաքաղցր տեղում հոր խոսքը կտրելով:
Նրա ձեռքում կաթի չբացված շիշ էր:

— Նայեք:

Նրանք կաթը ստանում էին «Սթաներթընի ձիթագործարանից»: Շշի կանաչ
պիտակի վրա գրված էր «Սթաներթընի ձիթագործարան»:

— Սա էլ նայեք,— Ֆիլիսը մատնացույց արեց պիտակի ներքեւի մասի
մակագրությունը: «Թուլատրված է Նյու յուլքի Առողջապահական դեպարտամենտի
կողմից»: Դա նման էր օրինական պիտակի անշնորհք կեղծման:

— Որտեղի՞ց ես սա վերցրել,— հարցրեց Մալընը:

— Կարծեմ Էլջերի խանութից: Միգուցէ ռեկլամի ձեռն է:

— Արհամարհում եմ այն մարդուն, որը ձուկը որդով է բռնում,— ծանրումեծ
շարունակում էր միստր Քարթերը:— Ճանճը... ճանճն արվեստի գործ է: Բայց այն
մարդը, որը որդ է օգտագործում, ի վիճակի է թալանել որբերին եւ եկեղեցիներ այրել:

— Մի՛ խմիր,— ասաց Մալընը:— Արի մնացած ուտելիքները նայենք:

Երեք նոր կեղծիք հայտնաբերվեց: Կոնֆետների տուփը, որը հորջորված էր
«Քաղցրանուշ», մուգ կարմրի փոխարեն նարնջագույն էր ներկված: Մյուսն
«Ամերիկյան ՊաՆիի» պուլիկ էր, սովորականից համարյա կիսով չափ մեծ, իսկ
երրորդը մի շիշ «Սուդայաջուր» էր:

— Շատ տարօրինակ է,— ասաց Մալընը, ծնոտը շփելով:

— Ես միշտ փոքրերին ետ եմ գրում ջուրը,— ասաց միստր Քարթերը:— Նրանց պահելը վայել բան չէ, իրեն հարգող ամեն ձկնորս այդ բանը գիտի: Թող աճեն, թող հասունանան, փորձ ձեռք բերեն: Իմ ուզածներն այն ձեր խորամանկներն են, որոնք պահ են մտնում գերանների տակ, որոնք ձկնորսի հայտնվելուն պես մի կողմ են սլանում: Ա՛յ այդ քաջերն են արժանի հակառակորդներ:

— Ես սրանք ետ կտանեմ Էլջերին,— ասաց Մալընը, մթերքները դնելով թղթե պայուսակի մեջ:— Եթե ուրիշ սրանց նման բաներ տեսնես, ձեռք չտաս, պահիր:

— Հին ծովախորշն իսկական տեղն է,— ասաց Քարթերը:— Այնտեղ են նրանք թաքնվում:

Շաբաթօրյա առավոտը պայծառ էր ու գեղեցիկ: Միստր Քարթերը կանուխ արթնացավ, նախաճաշեց եւ ուղեւորվեց Հին ծովախորշը՝ պատանու պես թեթեւաքայլ, մաշված լայնեզր գլխարկը կտրիճաբար թեք դրած:

Զիմ Մալընը խմեցվերջացրեց սուրճն ու ճամփա ընկավ դեպի Քարմայքլների տունը:

Մեքենան առաջվա պես զարածում էր:

Պատուհանները բաց էին, բրիջի սեղանը՝ պատրաստ, բոլոր լույսերը միացրած, մի խոսքով, ճիշտ այնպես, ինչպես նախորդ գիշերը: Դա Մալընին հիշեցրեց մի անգամ կարդացած պատմությունն օվկիանոսով սլացող նավի մասին, որի վրա ամեն ինչ տեղը տեղին է, բայց տախտակամածի վրա ոչ մի կենդանի շունչ չկա:

Գուցե մեկին զանգահարե՞նք,— ասաց Ֆիլիսը, երբ Զիմ Մալընը տուն վերադարձավ:— Համոզված եմ, ինչոր բան այնպես չէ:

— Անշուշտ: Բայց ո՞ւմ:— Նրանք այդ թաղամասում օտար էին: Թեթեւ թանոթ էին երեքչորս ընտանիքի հետ, սակայն գաղափար չունեին, թե ո՞վ կարող էր Քարմայքլներին ճանաչել:

Հարցը լուծեց հեռախոսի զանգը:

— Եթե այստեղ ապրողներից մեկն է,— ասաց Զիմը, մինչ Ֆիլիսը կպատասխաներ,— նրան հարցրու:

— Այո՞:

— Բարեւ ձեզ: Երեւի ինձ չեք ճանաչում: Իմ անունը Մերիըն Քարփենթըրը է, ես ձեր հարեւանն եմ: Ուզում էի հարցնել, հո ամուսինս ձեզ մոտ չի՞ մտել:—
Մետաղահանչուն հեռախոսային ձայնն, այնուհանդերձ, հաղորդում էր հուզմունքն ու վախը:

— Գիտե՞ք, ոչ: Այս առավոտ մեզ մոտ ոչ ոք չի եկել:

— Ա՛, պարզ է:— Չայնը կարծես դողաց:

— Կարո՞ղ եմ մի բանով օգնել,— հարցրեց Ֆիլիսը:

— Չեմ հասկանում,— ասաց միսիս Քարփենթըրը:— Ջորջը՝ իմ ամուսինը, առավոտյան հետս նախաճաշում էր: Հետո գնաց վերել, որ պիջակը հագնի: Ու դրանից հետո նրան չեմ տեսել:

— Օ՛:

— Ես վստահ եմ, նա ներքեւ չի իջել: Գնացի տեսնեմ, թե ինչու է ուշանում՝ մենք պիտի մեքենայով տեղ գնայինք, եւ տեսա, որ սենյակում չէ: Տնով մեկ փնտրեցի: Մտածեցի, թե գուցե անհաջող կատակ է անում, թեւ Ջորջը երբեք չէր կատակում, ուստի նայեցի մահճակալների տակ ու պահարանների մեջ: Հետո նայեցի նկուղը, մնա կողքի հարեւանների մոտ, բայց ոչ ոք նրան չէր տեսել: Մնածեցի, որ գուցե ձեզ է այցելել, նա ասում էր, որ միտք ունի...

Ֆիլիսը միսիս Քարփենթըրին պատմեց Քարմայքլների անհետացման մասին: Ապա, եւս մի քանի վայրկյան խոսելուց հետո, լսափողները դրեցին:

— Ջի՛ւմ,— ասաց Ֆիլիսը,— ինձ այս ամենը դուր չի գալիս: Ավելի լավ է ուստիկանությանը հայտնես Քարմայքլների մասին:

— Եթե պարզվի, որ գնացել են Ալբանի՝ ընկերներին հյուր, բավական հիմար դրության մեջ կընկնենք:

— Ի՞նչ արած:

Ջիմը գտավ համարը եւ հավաքեց, սակայն գիծը զբաղված էր:

— Ավելի լավ է գնալ:

— Սա հետո վերցրու,— Ֆիլիսը նրան մեկնեց թղթե պայուսակը:

Ուստիկանության կապիտան Լենսըրը համբերատար, կարմրաթուշ մարդ էր, որն ամբողջ գիշեր եւ առավոտվա մեծ մասը զբաղվել էր բողոքներ լսելով: Նա հոգնել էր, նույնիսկ ավելի, քան հերթապահ սերժանտներն ու պարեկները: Այդուհանդերձ,

կապիտանը միսոր Մալընին հրավիրեց իր առանձնասենյակը եւ լսեց նրա պատմությունը:

— Ես ուզում եմ, որ դուք ձեռ պատմածը գրավոր շարադրեք,— ասաց Լըսնըրը, երբ Մալընն ավարտեց. — Մենք երեկ երեկոյան մի հարեւանից ահագանգ ենք ստացել Քարմայքլների մասին: Փորձում ենք նրանց հայտնաբերել: Միսիս Քարփենթըրի ամուսնուն էլ հաշված, երկու օրվա մեջ սա տասներորդն է:

— Տասներորդ ի՞նչը:

— Անհետացման դեպքը:

— Տե՛ր աստված,— շշնջաց Մալընը: Նա ձեռքից ձեռք տեղափոխեց թղթե պայուսակը:— Բոլորն այս քաղաքի՞ց:

— Բոլորը,— չոր ասաց կապիտան Լեսնըրը,— այս քաղաքի Վեյնսվիլ թաղամասին: Եվ հատկապես այդ թաղամասի չորս փողոցներից:— Նա նշեց փողոցների անունները:

— Ես այնտեղ եմ ապրում,— ասաց Մալընը:

— Ես նույնպես:

— Որեւէ կասկած ունե՞ք, թե ով կարող է լինել... առեւանգողը,— հարցրեց Մալընը:

— Չենք կարծում, թե դա առեւանգում է,— ասաց Լեսնըրը, վառելով այդ օրվա ընթացքում քսաներորդ սիգարետը:— Փրկագին պահանջող ոչ մի գրություն: Ոչ մի ընտրություն: Կորածներից շատերն առեւանգողի համար գրոջ չէին կարող առժենալ... Եվ... Այդպիսի մեծածախ գո՞րծ՝ չի կարող պատահել:

— Գուցե այդ դեպքում մտագա՞ր:

— Անշուշտ: Բայց ինչպե՞ս է փախցրել ամբողջ ընտանիքներ: Կամ հասունացած տղամարդկանց՝ ձեզ նման հաղթանդամ: Եվ որտե՞ղ է թաքցրել նրանց, կամ նրանց մարմինները:— Լեսնըրը չարությամբ սեղմեց հանգցրեց սիգարետը:— Իմ մարդիկ փնտրում են քաղաքի բոլոր անկյուններում: Քսան մղոն շառավղով չկա մի ոստիկան, որ չմասնակցի որոնումներին: Կանգնեցնում են մեքենաները: Եվ ոչինչ չեն գտել:

— Հա, մի բան եւս:— Մալընը ցույց տվեց կեղծված ուտելիքները:

— Դա էլ չգիտեմ,— մռայլ խոստովանեց Լեսնըրը: Ես դրա համար բավականաչափ ժամանակ չունեմ: Մենք ուրիշ բողոքներ էլ ենք ստացել:— Զանգեց

հեռախոսը, սակայն Լեւոնըն ուշադրություն չդարձրեց:— Մեւ շուկայի գործ է երեւում: Ես դրա նման մի քանի բան ուղարկել եմ Ալբանի՝ քննության: Փորձում եմ հայտնաբերել, թե ով է տարածում: Հնարավոր է, որ արտասահմանյան են: Փաստորեն, դա ՀՖԲի... անիծյա՛լ հեռախոսով:

Նա ամբողջ ուժով ճանկեց լսափողը:

— Լեւոնըն լսում է: Այո... այո: Դու վստա՞հ ես: Իհարկե, Մերի: Հենց հիմա կգամ:— Լեւոնընը կախեց լսափողը: Նրա կարմիր դեմքը հանկարծ միանգամից գունատվեց:

— Կնոջս քույրն էր,— ասաց նա:— Կինս չկա:

Մալընը գլխապտույտ արագությամբ քշեցհասավ տուն, այնպես կտրուկ արգելակեց, որ քիչ էր մնում գլուխը խփեր դիմապակուն, եւ ներս վազեց:

— Ֆի՛լիս,— բղավեց նա: Որտե՞ղ է նա: Աստված իմ, մտածեց Մալընը: Եթե նա չկա, ապա...

— Բա՞ն է պատահել,— հարցրեց Ֆիլիսը, խոհանոցից դուրս գալով:

— Ես կարծեցի...— Նա այնպես պինդ գրկեց կնոջը, որ վերջինս ցավից ճչաց:

— Ախր,— ժպտալով ասաց Ֆիլիսը,— նորապսակներ հո չե՞նք. Արդեն տարիուկես է ամուսնացած ենք...

Մալընը նրան պատմեց, ինչ որ իմացել էր ոստիկանատանը:

Ֆիլիսը շուրջը նայեց: Մի շաբաթ առաջ այդ հյուրասենյակն այնքա՛ն տաք եւ ուրախ էր թվում: Հիմա օթոցի տակի ստվերը վախեցրեց նրան, իսկ պահարանի բաց դուռը պարզապես սարսուռ առաջացրեց: Վե՛րջ անհոգ կյանքին:

Դուռը ծեծեցին:

— Չգնաս,— ասաց Ֆիլիսը:

— Ո՞վ է,— հարցրեց Մալընը:

— Ջո Դաթընը, ձեր փողոցից: Երեւի նորությունը լսե՞լ էք:

— Այո,— ասաց Մալընը փակ դռան ետեւից:

— Մենք փողոցներում բարիկաղներ ենք ստեղծում,— ասաց Դաթընը:— Պետք է ստուգենք բոլոր եկողգնացողներին: Մենք վերջ կտանք այս բանին, նույնիսկ եթե ոստիկանությունը չի կարողանում: Ուզո՞ւմ եք մեզ միանալ:

— Այն էլ ինչպես,— ասաց Մալընը եւ բացեց դուռը: Դռան մոտ կանգնած ցածրահասակ, թուխ մարդու հագին բանկային հին համազգեստ էր: Ձեռքին՝ երկու ոտնաչափ երկարությամբ փայտի մի հաստ կտոր:

— Վերմակի պես ծածկելու ենք այս փողոցները,— ասաց Դաթընը:— Եթե նորից մեկն անհետանա, ուրեմն ինչոր ընդհատակյա խմբի գործ է:— Մալընը համբուրեց կնոջը եւ միացավ նրանց:

Այդ օրը դպրոցի դահլիճում բազմամարդ ժողով արեցին: Ներկա էին ոչ միայն տուժած փողոցների բնակիչները, այլեւ բոլոր նրանք, ում հաջողվել էր ներս մտնել: Առաջին հերթին հայտնի դարձավ, որ, չնայած փողոցները փակելուն, Վեյնսվիլ թաղամասից կորել էին եւս երեք հոգի:

Խոսեց կապիտան Լենըն ու ասաց, որ Ալբանից օգնություն է խնդրել: Ուր որ է պիտի գային հատուկ ոստիկաններ, ինչպես նաեւ ՀՖՔի աշխատակիցներ: Նա ազնվորեն խոստովանեց, որ չգիտի՝ ո՞վ կամ ի՞նչ է դա անում եւ ինչո՞ւ: Չէր կարող նույնիսկ պատասխանել, թե ինչու են բոլոր կորածները Վեյնսվիլ թաղամասի նույն հատվածից:

Նա Ալբանից պատասխան էր ստացել կեղծված սննդամթերքների մասին, որոնք ասես հեղեղել էին թաղամասը: Քիմիկոսները դրանցում ոչ մի թունավոր նյութի հետք չէին հայտնաբերել: Այդպիսով հերքվեց նորերս ի հայտ եկած այն տեսությունը, թե սննդամթերքները թմրեցնում են մարդկանց եւ ստիպում նրանց գնալ անհայտ ուղղությամբ: Ինչեւիցե, Լեսնըրը զգուշացրեց վտանգի մասին:

Այն ընկերությունները, որոնց պիտակները կեղծվել էին, հայտարարեցին, որ գաղափար չունեն, թե ով կարող է այդ բանն անել: Նրանք պատրաստ էին դատի տալ բոլոր նրանց, ովքեր ոտնահարում են իրենց իրավունքները:

Խոսեց քաղաքագլուխը, շարադրելով մի քանի ծեծված մտքեր ու խորհուրդ տվեց լավատես լինել, ասելով, թե քաղաքային իշխանությունները հանձն են առնում կարգավորել իրավիճակը:

Իհարկե, քաղաքագլուխը Վեյնսվիլ թաղամասում չէր ապրում:

Ժողովն ավարտվեց, եւ մարդիկ վերադարձան բարիկաղները: Սկսեցին գիշերվա համար վառելափայտ փնտրել, բայց դա պետք չեկավ:

Ալբանից օգնություն հասավ՝ մարդիկ եւ հանդերձանք: Բոլոր չորս փողոցները շրջափակեցին զինված պահնորդները: Լուսարձակներ վառվեցին եւ թաղամասում երեկոյան ութից հետո պարեկային ժամ հայտարարվեց:

Միստր Քարթըրն այդ հուզումներից անմասն մնաց: Մայրամուտին վերադարձավ. դատարկ ձեռքերով, բայց՝ երջանիկ: Պահնորդները ներս թողեցին, եւ նա եկավ տուն:

— Հիանալի օր էր ձկնորսության համար,— հայտարարեց միստր Քարթըրը:

Մալըններն ահավոր գիշեր անցկացրին՝ առանց հանվելու մերթմընդմերթ ննջում էին, ապա աչքերը բացում ու տեսնում լուսարձակների պատուհաններից ներս թափանցող լույսը եւ լսում զինված պահնորդների ծանր քայլերը:

Կիրակի, առավոտյան ժամը ութը— եւս երկու անհետացած: Կորել էին այն չորս թաղամասերից, որտեղ հսկողությունն ավելի խիստ էր, քան ցանկացած համակենտրոնացմէն ճամբարում: Ժամը տասին միստր Քարթըրը, մազաչափ ուշադրություն իսկ չդարձնելով Մալընների առարկություններին, ուսին գցեց ձկնորսական պարագաներով իր պայուսակն ու գնաց: Ապրիլի երեսունից սկսած նա ոչ մի օր չէր կորցրել եւ չէր էլ պատրաստվում կորցնել ամբողջ սեզոնի ընթացքում:

Կիրակի, կեսօր— մեկը եւս անհետացավ, եւ կորածների ընդհանուր թիվը դարձավ տասնվեց հոգի:

Կիրակի, ժամը մեկը— բոլոր կորած երեխաները գտնվեցին:

Ոստիկանական մեքենան նրանց գտավ քաղաքի մատույցներում— ութ հոգի, ներառյալ Քարմայքլների որդին, նրանք շշմած դեպի տուն էին քայլում: Երեխաներին անմիջապես հասցրին հիվանդանոց:

Սակայն կորած մեծահասակների հետքն անգամ չկար:

Լուրը բերնեբերան ավելի արագ տարածվեց, քան թերթերի կամ ռադիոյի միջոցով: Երեխաները ողջ եւ առողջ էին: Հոգեբույժներին հաջողվեց ընդամենը մի բան պարզել՝ բոլորն էլ թռիչքի զգացում էին ունեցել, որին ուղեկցել էր սրտխառնոցը: Երեխաներին ապահովության համար պահեցին հիվանդանոցում՝ հսկողության տակ:

Բայց, երեկոն վրա չհասած, մի ուրիշ երեխա անհետացավ Վեյնսվիլից:

Մայրամուտից անմիջապես առաջ միստր Քարթըրը տուն եկավ: Նրա ուսապարկում երկու խոշոր ծիածանափայլ կարմրախայտ կար: Նա ուրախ ողջունեց Մալրններին եւ գնաց գարած՝ ձկները մաքրելու:

Ջիմ Մալրնը խոժոռվելով դուրս եկավ ու նրա ետեւից գնաց գարած: Նա ուզում էր ծերուկին մի բան հարցնել վերջինիս մի երկու օր առաջ ասածի կապակցությամբ: Թե ինչի կապակցությամբ՝ լավ չէր հիշում, բայց գիտեր, որ ասելիքը կարելու էր բան էր:

Կողքի տանն ապրող հարեւանը, որի անունը մոռացել էր, ողջունեց նրան:

— Մալրն,— ասաց հարեւանը,— ինձ թվում է ես գիտեմ:

— Ի՞նչ,— հարցրեց Մալրնը:

— Դուք տեսություններն ուսումնասիրե՞լ եք:

— Իհարկէ:

Հարեւանը մի վտիտ տղամարդ էր, հազին վերնաշապիկ ու բաճկոնակ: Նրա ճաղատը մայրամուտի ցուլի ներքո հրակարմիր գույն էր ստացել:

— Ուրեմն լսեք: Դա առեւանգողների գործ չի: Նրանց մեթոդներն այդքան անմիտ չէին լինի: Ճի՞շտ է:

— Կարծում եմ, որ այո:

— Մտազարը բացառվում է: Ինչպե՞ս պիտի տասնհինգ, տասնվեց մարդ տաներ: Եվ վերադարձներ երեխաներին: Նույնիսկ մտազարների մի ամբողջ հրոսակախումբ չէր կարողանա այդպիսի բան անել, մանավանդ այսքան ոստիկանների մեջ: Ճի՞շտ է:

— Շարունակեք:— Աչքի ծայրով Մալրնը տեսավ, որ հարեւանի գեր կինն աստիճաններով իջնում է: Կինը մոտեցավ ու սկսեց լսել:

— Նույնը վերաբերվում է ոճազործների խմբին, կամ նույնիսկ մարսեցիներին: Այդ անել անհնար է, իսկ եթե հնարավոր լինի էլ՝ անիմաստ է: Մենք պետք է մի հակատրամաբանական վարկած գտնենք, եւ դա էլ կլինի տրամաբանական պատասխանը:

Մալրնը սպասում էր: Նա հայացք նետեց կնոջ վրա: Վերջինս նայում էր Մալրնին՝ ձեռքերը կրծքին խաչած: Ավելի շուտ, ոչ թե նայում էր, այլ հայացքով խժռում:— Չլինի՞ վրաս բարկանում է,— մտածեց Մալրնը:— Ի՞նչ եմ արել:

— Միայն պատասխանն այն է,— դանդաղ ասաց հարեւանը,— որ մոտերքում անցք կա: Անցք՝ տարածքաժամանակային զանգվածում:

— Ի՞նչ,— բացականչեց Մալընը,— լավ չհասկացա՛:

— Անցք ժամանակի մեջ,— բացատրեց ճաղատ ինժեները,— կամ անցք տարածության մեջ: Կամ էլ երկուսի մեջ միաժամանակ: Մի՛ հարցրեք, թե ինչպես է հայտնվել, փաստն այն է, որ հայտնվել է: Տեղի է ունենում հետեւյալը. մարդն ընկնում է այդ անցքը եւ թրը՛փ, հայտնվում է մի այլ տեղում: Կամ այլ ժամանակում: Կամ երկուսի մեջ միաժամանակ: Իհարկե, այդ անցքը տասնելն անհնար է՝ այն չորրորդ չափման մեջ է,— բայց կա: Ինձ թվում է, եթե այդ մարդկանց հետեւեին, կտեսնեին, որ նրանցից յուրաքանչյուրը անցել է որոշակի կետով ու... անհետացել:

— Հըմ,— Մալընը ծանրութեթեւ արեց այդ միտքը:— Հետաքրքիր է թվում: Բայց մենք գիտենք, որ շատ մարդիկ իրենց սեփական տներից են չքվել:

— Այո,— համաձայնեց հարեւանը:— Մի բոպե մտածեմ... Իմացա՛: Տարածքաժամանակային անցքն անշարժ չէ: Այն սահում է, շարժվում: Սկզբում Քարփենթըրների տանն է, հետո աննպատակ տեղաշարժվում...

— Հապա ինչո՞ւ այս չորս թաղամասից այն կողմ չի անցնում,— հարցրեց Մալընը, տարակուսելով, թե ինչու է այդ մարդու կինը շարունակում խեթել իրեն՝ շուրթերն ամուր սեղմած:

— Դե,— ասաց հարեւանը,— որոշ սահմաններ պիտի ունենա՞, թե՞ ոչ:

— Իսկ ինչո՞ւ վերադարձվեցին երեխաները:

— Օ՛հ, աստծո սիրուն, Մալըն, հո չե՞ք ուզում, որ ամեն փոքր բան հաշված լինեմ: Սա լավ վարկած է: Պետք է ավելի շատ փաստեր ունենանք, որպեսզի կարողանանք հաշվարկել ամբողջ տեղի ունեցածը:

— Ողջույն,— ասաց միստր Քարթըրը, գարածից դուրս գալով, ձեռքին երկու սիրունիկ կարմրախայտ՝ խնամքով մաքրած ու լվացած:

— Կարմրախայտը խիզախ հակարակորդ է եւ միաժամանակ հրաշալի ուտելիք: Ամենագերազանց հանգստի ձեւը եւ ամենագերազանց կերակուրը:— Նա անշտապ քայլեց տուն:

— Ես ավելի լավ վարկած ունեմ,— ասաց հարեւանի կինը— կրծքին խաչած ձեռքն իջեցնելով ու հպելով ազդրին:

Տղամարդիկ երկուսով շրջվեցին ու նայեցին նրան:

— Ո՞վ է այստեղ միակ անձնավորությունը, որը մազաչափ իսկ մտահոգված չէ, թե ինչ է տեղի ունենում: Ո՞վ է ամբողջ օրը ման գալիս պայուսակով, որի մեջ իր *ասեղով ձուկ է*: Ո՞վ է *ասում*, թե ամբողջ ժամանակը ձկնորսությամբ է անցկացնում:

— Օ՛, ոչ,— ասաց Մալընը:— Միայն ոչ Քարթըրը հայրիկը: Նա ձկնորսության վերաբերյալ մի ամբողջ փիլիսոփայություն ունի...

— Ինձ չի՛ հետաքրքրում նրա փիլիսոփայությունը,— բղավեց կինը:— Ձեզ հիմարացնում է, բայց ինձ չի հիմարացնի: Ես միայն գիտեմ, որ նա այս հարեւանության մեջ միակ մարդն է, որը մազաչափ էլ անգամ չի անհանգստանում, ամեն օր ինչոր տեղ է գնումգալիս եւ գիտեմ, որ նրան լինչի ենթարկելն էլ քիչ է:— Այս խոսքերով կինը կտրուկ շրջվեց ու ոտքերը քարշ տալով գնաց տուն:

— Լսեք, Մա՛լըն,— ասաց ճաղատ հարեւանը:— Ներողություն եմ խնդրում: Դե կանանց գիտեք, էլի: Նա վշտացած է, թեւեւ Դենին հիվանդանոցում է եւ ապահով:

— Անշուշտ,— ասաց Մալընը:

— Նա չի հասկանում տարածքաժամանակային զանգվածը,— լրջորեն շարունակեց հարեւանը,— բայց ես այսօր երեկոյան կբացատրեմ: Նա առավոտյան ներողություն կխնդրի: Այ կտեսնեք:

Տղամարդիկ մեկմեկու ձեռք սեղմեցին եւ վերադարձան յուրաքանչյուրն իր տուն:

Մութն ընկավ միանգամից եւ վառեցին բոլոր լուսարձակները: Լույսի ճառագայթները հատում էին փողոցները. թափանցում բակերն, արտացոլվում պատուհանների վրա: Վեյնսվիլի բնակիչները պատրաստվել էին նոր անհեգացումների:

Ջիմ Մալընը երագում էր կռահել, թե ո՞րն է տեղի ունեցածի պատճառը: Միայն թե իմանար... Իսկ այսպէս անգործ նստել ու սպասել... Նա այնքա՛ն անօգնական էր զգում: Ֆիլիսի շրթունքները գունատ էին ու ճաքճքված, իսկ աչքերը՝ հոգնած: Բայց միստր Քարթըրը, սովորականի պէս, զվարթ էր: Նա կարմրախայտը գազօջախի վրա տապակեց ու մատուցեց:

— Ես այսօր մի գեղեցիկ գետախորշ եմ գտել,— հայտարարեց Քարթըրը:— Հին ծովածոցում՝ գետաբերանի մոտ: Ամբողջ օրը ձուկ որսացի՝ թիկնած ափի կանաչին եւ ամպերին նայելով: Աներեւակայելի բաներ են ամպերը: Վաղը կգնամ այնտեղ եւ մի օր էլ ձուկ կորսամ: Հետո ուրիշ տեղ կընտրեմ: Խելոք ձկնորսը նույն գետում այնքան շատ չի որսա, մինչեւ ձուկը պակասի: Չափավորությունը լավ ձկնորսի նշանաբանն է: Մի քիչ վերցրու, մի քիչ թող: Ես հաճախ մտածել եմ...

— Ա՛հ, հայրիկ, խնդրում եմ,— ճշաց Ֆիլիսը եւ փղձկաց: Միստր Քարթըրը գլուխը տխուր տարուբերեց, ներողամտորեն ժպտաց եւ ձուկը կերավվերջացրեց: Հետո գնաց հյուրասենյակ նոր ճանճ պատրաստելու:

Մալրնները, հոգնատանջ, պառկեցին քնելու...

Մալրնն արթնացավ եւ մահճակալի մեջ ուղիղ նստեց: Նայեց ու տեսավ, որ Ֆիլիսը քնած է: Ձեռքի ժամացույցով չորսն անց հիսունուրթ էր: Համարյա առավոտ է, մտածեց նա:

Մալրնն անկողնուց ելավ, վրան խալաթ գցեց եւ աստիճաններով կամացիկ իջավ: Լուսարձակների շողերը արտացոլվում էին հյուրասենյակի պատուհանին, փողոցով քայլում էին պահնորդները:

Հանգստացնող տեսարան է, մտածեց նա եւ գնաց խոհանոց: Աշխատելով չաղմկել, մի բաժակ կաթ լցրեց: Սառնարանի գլխին թարմ թխվածք կար, նա մի կտոր կտրեց:

Առեւանգողները, մտածեց Մալրնը, մարսեցիներ: Մնցքեր տարածության մեջ: Կամ դրանց որեւէ կոմբինացիա: Ոչ, դա սխալ է: Երնեկ հիշեի, թե ի՞նչ էի ուզում հարցնել միստր Քարթըրին: Դա կարելու է:

Նա թխվածքի վրայից խմեց կաթը, մնացած թխվածքը ետ դրեց սառնարանի վրա եւ քայլեց դերի հյուրասենյակ: Եվ հանկարծ ամբողջ թափով մի կողմ շարտվեց:

Ինչոր բան բռնել էր նրան: Մալրնը ձեռքերը թափով տարուբերեց, բայց հարվածները ոչ մի բանի չդիպան: Ինչոր աներեվույթ ուժ երկաթե բռունցքի պես սեղմել էր նրան, աշխատելով վեր քաշել: Մալրնն իրեն մի կողմ նետեց, ճգնելով հենման կետ գտնել: Նրա ոտքերը անջատվեցին գետնից եւ նա մի պահ կախվեց, քացահարելով ու գալարվելով: Կողերն այնքան պինդ էին սեղմված, որ չէր կարողանում շնչել, ձայն հանել: Ինչոր բան անգթորեն վեր էր քաշում նրան:

Անցք տարածության մեջ, մտածեց Մալրնը եւ աշխատեց գոռալ: Նրա կատաղորեն թափահարվող ձեռքերը որսացին եւ ճանկեցին օթոցի ծայրը: Օթոցը Մալրնի հետ վեր բարձրացավ: Նա թափով ցնցվեց, մի պահ աներեւույթ ուժը թուլացավ եւ նա թրմիաց հատակին: Մալրնը սողաց դեպի դուռը: Ուժը նորից ճանկեց նրան, սակայն Մալրնը մոտեցել էր ջեռուցման խողովակին: Նա երկու ձեռքով փաթաթվեց խողովակին, աշխատելով դիմադրել: Նորից ցնցվեց եւ կարողացավ ազատել նախ մեկ, ապա մյուս ոտքը:

Ուժը սկսեց ավելանալ եւ խողովակը սարսափելի ճռռոց հանեց: Մալընին թվաց, թե գոտկատեղը ուր որ է կկիսվի, բայց նա դիմանում էր՝ ամեն մի մկանը պայթելու աստիճան լարելով: Հանկարծ աներեւույթ ուժը լրիվ թուլացավ:

Մալընը փռվեց հատակին:

Երբ ուշկի եկավ, լույսը լրիվ բացվել էր: Ֆելիսը նրա երեսին ջուր էր ցանում, ներքեւի շրթունքն ատամներով սեղմած: Մալընն աչքերը թարթեց, մի պահ տարակուսելով, թե որտեղ է գտնվում:

— Դեռ այստե՞ղ եմ,— հարցրեց նա:

— Լա՛վ ես զգում,— հարցրեց Ֆիլիսը:— Ի՞նչ էր պատահել: Ա՛խ, սիրելիս: Ես այստեղից հեռանանք:

— Ու՛ր է հայրդ,— դեռ շժմած հարցրեց Մալընը, ոտքի կանգնելով:

— Ձկնորսության: Հիմա խնդրում եմ նստիք: Բժիշկ եմ կանչելու:

— Ոչ: Սպասիր:— Մալընը գնաց խոհանոց: Սառնարանի վրա դրված էր թխվածքի տուփը: Վրան գրված էր՝ «Ջոնսոնի թխվածքեղենի խանութ: Վեյնսվիլ, Նյու Յորք»: Մեծատառ «Ք» Նյու Յորքի մեջ, իրոք, շատ փոքրիկ սխալ:

Իսկ միստր Քա՛րթերը: Արդյոք դա՞ էր պատասխանը: Մալընը նետվեց վերեւ ու հագնվեց: Նա ճմոթեց թխվածքի տուփը, խցկեց գրպանը եւ դուրս վազեց:

— Ոչ մի բանի ձեռք չտաս, մինչեւ ետ չգա՛մ,— գոռաց նա Ֆիլիսին: Ֆիլիսը նայեց, թե ամուսինն ինչպես է մեքենա նստում եւ կտրուկ տեղից պոկվում, հետո, արցունքները հազիվհազ զսպելով, գնաց խոհանոց:

Տասնհինգ րոպեից Մալընը Հին ծովախորշում էր: Նա մեքենան կանգնեցրեց եւ քայլեց գետի հոսանքն ի վեր:

— Միստր Քա՛րթեր,— բղավում էր նա, — միստր Քա՛րթեր:

Կես ժամ շարունակ Մալընը քայլեց ու գոռաց, ավելի ու ավելի խորանալով անտառի մեջ: Խիտ ծառերը հասել էին գետի բերանին, եւ նա ստիպված քայլեց ջրի միջով: Արագացրեց քայլերը, փորձեց վազել, ջուրը ճողփելով, քարերի վրա սայթաթելով:

— Միստր Քա՛րթեր:

— Այստե՛ղ եմ,— լսեց նա ծերունու ձայնը: Չայնը մի վտակի կողմից էր գալիս, եւ Մալընը գնաց այդ ուղղությամբ: Շուտով տեսավ միստր Քարթըրին, նստած մի փոքրիկ գետախորշի գառիվայր ավիին, երկար բամբուկե կարածողը ձեռքին: Մալընը վեր մագլցեց եւ նստեց նրա կողքին:

— Ոչ մի բան սրտիդ մոտ մի ընդունիր, տղաս,— ասաց միստր Քարթըրը:— Ուրախ եմ, որ ընդունեցիր ձկնորսությամբ զբաղվելու մասին խորհուրդս:

— Ոչ,— ասաց հեւասպառ Մալընը:— Ես ուզում եմ, որ դուք ինձ մի բան ասեք:

— Ուրախությամբ, — ասաց ծերուկը:— Ի՞նչ կուզեիր իմանալ:

— Ձկնորսը գետախորշի պաշարները լրիվ չի սպառի, այնպես չէ՞:

— Ես՝ ոչ: Բայց մի ուրիշը՝ գուցեւ:

— Եվ խայծը: Ամեն լավ ձկնորս արհեստական խա՞յծ կոգտագործի:

— Ես հպարտանում եմ իմ ձանձերով,— ասաց միստր Քարթըրը:— Աշխատում եմ նմանեցնել իսկականին: Ահա օրինակ, ձիաբորի մի գեղեցիկ կրկնօրինակ:— Նա գլխարկի միջից մի դեղին կեռիկ հանեց:— Իսկ սա էլ ահա մի սիրունիկ մոծակ:— Հանկարթ կարթաթելը ցնցվեց: Առանց դժվարության, վստահորեն, ծերունին այն դուրս քաշեց: Շնչահեղձ կարմրախայտին վերցրեց ձեռքը եւ ցույց տվեց Մալընին:

— Այս փոքրիկին չեմ պահի:— Նա զգուշորեն հանեց կեռիկը խոփկի արանքից եւ ձուկը ետ դրեց ջրի մեջ:

— Երբ նրան ես եք զցում, ի՞նչ եք կարծում, նա հասկանո՞ւմ է, մյուսներին ասո՞ւմ է:

— Ոչ,— ասաց միստր Քարթըրը,— փորձը նրան ոչինչ չի սովորեցնում: Նույն ջահել ձուկն իմ խայծը երկուերեք անգամ կուլ է տվել: Հասկանալու համար նախ պիտի մի քիչ մեծանան:

— Այդպես էլ կարծում էի:— Մալընը նայեց ծերուկին: Միստր Քարթըրն անտեղյակ էր, թե շուրջն ինչ է կատարվում, անմասն էր Վեյնվիլը համակած սարսափին:

Ձկնորսներն ապրում են իրենց ուրույն աշխարհում, մտածեց Մալընը:

— Բայց պիտի մեկ ժամ առաջ այստեղ լինեիր,— ասաց միստր Քարթըրը:— Մի շատ սիրունը կարթս կուլ տվեց: Ուժեղ, մեծ, երկու ֆունտից մի բան էլ ավելի: Եվ փախավ: Ոչինչ, մի ուրիշը կգա... հեյ ո՞ւր ես գնում:

— Ե՛տ,— գոռաց Մալընը եւ ճողփյունով նետվեց ջուրը: Հիմա հասկացավ, թե միստր Քարթըրի մեջ ինչ էր որոնել: Զուգահեռ: Այժմ ամեն ինչ պարզ էր:

Անմեղ միստր Քարթըրը որսում է իր կարմրախայտը, ճիշտ այնպես, ինչպես մյուս, ավելի մեծ ձկնորսը որսում է իր...

— Ե՛տ, մյուս ձկներին զգուշացնելու,— բղավեց Մալընն ուսի վրայից, սայթաքելով մամուռների մեջ: Միայն թե Ֆիլիսն ուտելիքին ձեռք տված չլինի: Նա հանեց գրպանից թխվածքի տուփը եւ ամբողջ ուժով շարտեց:

Անիծյա՛լ խայթ:

Մինչդեռ ձկնորսներն, ամեն մեկն իր համապատասխան միջավայրում, ժպտացին ու կրկին կարթերը ջուրն իջեցրին: